Հավելված N1
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2022 թվականի ----------- ---ի
N------Ա որոշման

# ԿԱՐԳ

## *«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ*

1. Սույն կարգը սահմանում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) կողմից սպառողների սպասարկման որակի վերաբերյալ տեղեկատվության Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) ներկայացման ընթացակարգը:

2. Ընկերությունը տեղեկատվությունը հանձնաժողով է ներկայացնում առձեռն, փոստային կամ էլեկտրոնային եղանակով՝ հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

3. Էլեկտրոնային եղանակով տեղեկատվությունը ներկայացվում է փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգի (Mulberry) կամ հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի (www.psrc.am) առցանց դիմումների և հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով: Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի առցանց դիմումների և հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով տեղեկատվության ներկայացման կարգը սահմանվում է հանձնաժողովի որոշմամբ:

4. Առձեռն եղանակով ներկայացման դեպքում տեղեկատվության ներկայացման օր է համարվում հանձնաժողովում տեղեկատվության և ուղեկցող գրության փաստացի մուտքագրման օրը, փոստային եղանակով ներկայացման դեպքում՝ տեղեկատվության և ուղեկցող գրության փոստային բաժանմունքում ընդունվելու օրվա օրացուցային կնիքի արտատիպում նշված օրը, փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry)

ներկայացման դեպքում՝ տեղեկատվության և ուղեկցող գրության էլեկտրոնային առաքման օրը, իսկ հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի առցանց դիմումների և հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացման դեպքում՝ այդ համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով տեղեկատվություն ներկայացրած անձին տեղեկատվության ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան էլեկտրոնային ծանուցման մեջ նշված օրը:

5. Փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry) տեղեկատվությունը ներկայացվում է Մայքրոսոֆթ էքսել (Microsoft Excel), Մայքրոսոֆտ Վորդ (Microsoft Word), Փի Դի Էֆ (PDF) ձևաչափով, տեղեկատվությունում գրանցումները կատարվում են Յունիկոդ (Unicode) տառատեսակով:

6. Առձեռն կամ փոստային եղանակով ներկայացման դեպքում ընկերությունը տեղեկատվությունը հանձնաժողով է ներկայացնում նաև էլեկտրոնային տարբերակով՝ այն ուղարկելով «Մայքրոսոֆթ Օֆիս էքսել» (Microsoft Office Excel) ծրագրային ձևաչափով՝ tech.report@psrc.am էլեկտրոնային հասցեին:

7. Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությամբ սահմանված ձևերին անհամապատասխանությունների, անճշտությունների կամ բացթողումների առկայության դեպքում ընկերությունը հանձնաժողովի կողմից տեղեկացվում է այդ մասին և օրենքով սահմանված կարգով իրազեկվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողով է ներկայացնում ճշգրտված տեղեկատվություն կամ տեղեկատվությանն առնչվող լրացուցիչ պարզաբանումներ:

8. Տեղեկատվության կազմման համար անհրաժեշտ աղբյուր հանդիսացող սկզբնական հաշվառման փաստաթղթերում անորոշությունների, անճշտությունների և այլ վիճահարույց տվյալների առկայության, կամ տարբեր պատճառներով այդ փաստաթղթերի վավերացված չլինելու դեպքում ընկերությունը սկզբնական հաշվառման առկա փաստաթղթերի կամ իր կողմից առավել արժանահավատ համարվող տեղեկատվության հիման վրա լրացնում և հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում տեղեկատվությունը ներկայացնում է հանձնաժողով, իսկ հետագայում նոր հիմնավոր փաստերի առկայության կամ սկզբնական հաշվառման փաստաթղթերում փոփոխությունների կատարման դեպքում տեղեկատվությունում կատարում է փոփոխություններ և հանձնաժողով է ներկայացնում ճշգրտված տեղեկատվություն:

9. Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունում ընկերության կողմից սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում նա վերջինս կարող է ներկայացնել ճշգրտված տեղեկատվութուն: Սույն կարգի կիրառության իմաստով՝ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված մեկից ավելի տեղեկատվությունից առաջինը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված, իսկ մյուսները՝ ճշգրտված տեղեկատվություն:

10. Տեղեկատվությունը ներկայացվում է սույն որոշման №№2-10 հավելվածներով սահմանված ձևերով:

11. Սույն որոշման №№2-4, №6 և №7 հավելվածներով սահմանված ձևերով տեղեկատվությունը ներկայացվում է եռամսյակային կարգով՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա ավարտը. №5 հավելվածով սահմանված ձևով տեղեկատվությունը՝ տարեկան կարգով՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող ամսվա ավարտը, №№8-10 հավելվածներով սահմանված ձևերով տեղեկատվությունը՝ եռամսյակային և աճողական կարգով՝ (եռամսյակ, կիսամյակ, ինը ամիս և տարեկան կտրվածքներով) մինչև համապատասխան հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա ավարտը, №9 և №10 հավելվածներով սահմանված ձևերով տեղեկատվության հիմքով մշակվում և ներկայացվում է ըստ տարիների աճողական գրաֆիկ:

Հավելված № 2
Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի -------------------ի
№ -----Ա որոշման

# Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## Սպառողների էլեկտրամատակարարման ընդհատումների մասին

______________ **20 թվական**
եռամսյակ

| № | Բաշխողի մասնաճյուղի և ցանցի անվանումը | | Բնակավայրի անվանումը | | Բաշխման ցանցի էլեկտրակա-յանքի կարգավարական անվանումը | Ընդհատման ամսաթիվը | Ընդհատ-ման ժամը | Ընդհատման պատճառը | Ընդհատման տևողություն (րոպե) | Էլեկտրակայանքը (նշել նրա կարգավարական անվանումը), որի պատճառով տեղի է ունեցել ընդհատումը | Էլեկտրակայանքից սնվող սպառողների քանակը ըստ սնման լարման | | | | | | էլեկտրակայան-քից տվյալ եռամսյակում էլեկտրական էներգիայի առաքումը (կՎտժ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մասնաճյուղ | ցանց | մարզ | քաղաք, գյուղ | | | | | | | 35 կՎ և բարձր | 10 կՎ | 6 կՎ | 0,4 կՎ | 0,22 կՎ | Ընդամենը | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | |

Սույն տեղեկատվության 9-րդ սյունակը լրացնել ըստ հետևյալ պատճառների.
1) բաշխման ցանցի էլեկտրակայանքի պլանային նորոգման պատճառով,
2) բաշխման ցանցի էլեկտրակայանքի արտահերթ նորոգման պատճառով,
3) բաշխման ցանցի էլեկտրակայանքի հրաժարման պատճառով,
4) այլ ընկերությունների պատճառով՝ բացառությամբ սպառողների (այս դեպքում 11-րդ սյունակում նշել նաև ընկերության անվանումը),
5) սպառողների պատճառով (այս դեպքում 11-րդ սյունակում նշել նաև սպառողի իրավաբանական անվանումը),
6) բաշխողի գործունեության վրա ազդեցություն ունեցած ֆորս-մաժորի պատճառով (11-րդ սյունակում նշել նաև Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կողմից տրված տեղեկանքի №-ը):

______________________ ______________________
(էլեկտրոնային ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հավելված № 3
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի ---------------
ի № -----Ա որոշման

# Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշների մասին**

______________________________ **20 թվական**

(եռամսյակ)

| № | Բաշխողի մասնաճյուղի և ցանցի անվանումը | | Բնակավայրի անվանումը | | Բաշխման ցանցի էլեկտրակայանքի կարգավարական անվանումը | Էլեկտրակայանքից սնվող ուղղության անվանումը, (հանգույցի անունը կամ որոշիչը) | Լարման շեղման ամիսը | Լարման շեղման պատճառը | Լարման շեղման ժամերը (տիրույթ) | Լարման շեղման տևողությունը (ժամ) | Լարման շեղման տիրույթը | Սպառողների սնման անվանական լարումը (կՎ) | Անորակ էլեկտրական էներգիա ստացած սպառողների քանակը | Սպառողներին առաքված անորակ էլեկտրական էներգիայի քանակը (կՎտժ) | Էլեկտրակայանքից սնվող ուղղության էլեկտրական ցանցում սպառողների քանակը | Էլեկտրակայանքից տվյալ ամսում էլեկտրական էներգիայի առաքումը (կՎտժ) | Էլեկտրակայանքից դեպի սնվող ուղղություն տվյալ ամսում էլեկտրական էներգիայի առաքումը (կՎտժ) | Էլեկտրակայանքից սնվող ուղղության էլեկտրական ցանցում տվյալ ամսում էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մասնաճյուղ | ցանց | մարզ | քաղաք, գյուղ | | | | | | | | | | | | | | կՎտժ | % |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |

Սույն տեղեկատվության 9-րդ սյունակը լրացնել ըստ հետևյալ պատճառների.

1) բաշխողի պատճառով,

2) այլ ընկերությունների պատճառով՝ բացառությամբ սպառողների,

3) սպառողների պատճառով,

4) բաշխողի գործունեության վրա ազդեցություն ունեցած ֆորս-մաժորի պատճառով:

(էլեկտրոնային ստորագրություն)

(անուն, ազգանուն)

Հավելված № 4

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022
թվականի
-----------------ի № ---Ա որոշման

# Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**ՀՀ Էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային և Էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնների պահանջները խախտելու համար սպառողներին վճարված տույժերի վերաբերյալ**

________________ **20 թվական**
եռամսյակ

| № | Բաշխողի մասնաճյուղի և ցանցի անվանումը | | Բնակավայրի անվանումը | Սպառողի | | | Բաշխողի կողմից ԷԲՑ* և ԷՄԱ** կանոնների պահանջների խախտման դեպքը | Խախտման ամսաթիվը | Վճարված տույժի գումարը (դրամ) | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մասնաճյուղ | ցանց | | անուն ազգանունը կամ կազմակերպության անվամումը | հաշվառման քարտի համարը | հասցեն | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1 | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | |

Սույն տեղեկատվության 8-րդ սյունակը լրացնել ըստ հետևյալ պատճառների.

1) Էլեկտրամատակարարման պլանային ընդհատման և դրա վերականգնման՝ ԷԲՑ կանոնների 22-րդ գլխով սահմանված ընթացակարգի կամ ժամկետների յուրաքանչյուր խախտման դեպքում,

2) Էլեկտրամատակարարման վթարային ընդհատման և դրա վերականգնման՝ ԷԲՑ կանոնների 22-րդ գլխով սահմանված ընթացակարգի կամ ժամկետների յուրաքանչյուր խախտման դեպքում,

3) Էլեկտրամատակարարման դադարեցման և վերականգնման ԷԲՑ կանոնների 23-րդ գլխով սահմանված ընթացակարգի կամ ժամկետների յուրաքանչյուր խախտման դեպքում,

4) Առևտրային հաշվառքի սարքի տեղակայման և փոխարինման՝ ԷԲՑ կանոնների 34-րդ գլխով սահմանված ընթացակարգի կամ ժամկետների յուրաքանչյուր խախտման դեպքում,

5) Առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման՝ ԷԲՑ կանոնների 35-րդ գլխով սահմանված ընթացակարգի կամ ժամկետների յուրաքանչյուր խախտման դեպքում,

6) ԷԲՑ կանոնների 30-րդ գլխով սահմանված ընթացակարգի կամ ժամկետների յուրաքանչյուր խախտման դեպքում,

7) ԷԲՑ կանոնների 170-րդ, 173-րդ, 174-րդ և 183-րդ կետերով նախատեսված ժամկետների խախտման դեպքում,

8) ԷԲՑ կանոնների 178-րդ կետով նախատեսված ժամկետների խախտման դեպքում,

9) ԷԲՑ կանոններով սահմանված ծանուցումների (տեղեկացումների) և փաստաթղթերի հանձնման կարգի կամ ժամկետների յուրաքանչյուր խախտման դեպքում,

10) Հաշվարկային փաստաթղթում սպառողի փաստացի սպառած էլեկտրական էներգիայի քանակից ավել քանակ նշելու փաստի հաստատման դեպքում:

11) Հաշվարկային փաստաթղթում սխալի ուղղման՝ ԷՄԱ կանոններով սահմանված կարգի յուրաքանչյուր խախտման դեպքում,

12) Սպառված էլեկտրական էներգիայի վերահաշվարկման՝ ԷՄԱ կանոններով սահմանված ընթացակարգի կամ ժամկետի յուրաքանչյուր խախտման դեպքում,

13) Պայմանագրի կնքման, փոփոխման, լուծման ԷՄԱ կանոններով սահմանված ընթացակարգի կամ ժամկետի յուրաքանչյուր խախտման դեպքում,

14) Սպառողի դիմում-բողոքին պատասխանելու համար ԷՄԱ կանոններով սահմանված ընթացակարգի կամ ժամկետի յուրաքանչյուր խախտման դեպքում,

ԷԲՑ* Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոններ

ԷՄԱ** Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններ

________________ ________________
(էլեկտրոնային ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հավելված №5
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2022 թվականի-------------------ի № ---Ա որոշման

# Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Բաշխողի կողմից սպառողի սպառման համակարգի էլեկտրամատակարարման պլանային և վթարային ընդհատումների տարեկան գումարային տևողության գերազանցման մասին**

**20 ____ թվական**

| № | Բաշխողի մասնաճյուղի և ցանցի անվանումը | | Սպառողի անուն ազգանունը կամ կազմակերպության անվանումը | Հաշվառման քարտի համարը (սպառիչ) | Հասցե (սպառման համակարգի գտնվելու վայրը) | Բաշխման ցանցի (ենթասպառողի դեպքում սպառողի) էլեկտրակայանքի կարգավարական անվանումը | Սպառողի (ենթասպառողի) սնման անվանական լարումը (կՎ) | Դիտարկվող ժամանակահատվածի | | Հոսանքազրկումների | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մասնաճյուղ | ցանց | | | | | | սկիզբը | ավարտը | տևողություն (ժամ) | քանակ (քանի անգամ) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | |

_______________________ (էլեկտրոնային ստորագրություն)

_______________ (անուն, ազգանուն)

Հավելված № 6
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2022- թվականի --------------------ի № -----Ա որոշման

# Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից կատարված վերահաշվարկների և հաշվարկված տույժերի վերաբերյալ**

__________ **20 թվական**
եռամսյակ

| № | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության | | Հաշվառման քարտի համարը | Բնակիչ բաժանորդի անուն ազգանունը, կամ իրավաբանական անձի անվանումը | Բաժանորդի գտնվելու (բնակության) վայրը (հասցեն) | Առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման ամսաթիվը | Էլեկտրական էներգիայի վերահաշվարկի վերաբերյալ բաժանորդին տեղեկատվությունը ներկայաց-նելու ամսաթիվը | Ստուգա-չափման ենթակա առևտրային հաշվառքի սարքի նախավերջին ցուցմունքները (ցերեկ/գիշեր) | Ստուգա-չափման ենթակա առևտրային հաշվառքի սարքի նախավերջին ցուցմունքի գրանցման ամսաթիվը | ԷՄԱ* կանոնների կետը, ըստ որի կատարվել է վերահաշ-վարկը | Առևտրային հաշվառքի սարքի խախտման ժամանակահատվածը (օրերի քանակը) | Փորձագիտական եզրակացության մեջ նշված առևտրային հաշվառքի սարքի սխալանքի թույլատրելի տիրույթը գերազանցող մեծությունը (%) | Վերահաշվարկված էլ. էներգիայի քանակը (կվտ.ժամ) | ԷՄԱ կանոնների 99 կետով սահմանված դեպքերում Սպառողին վճարված տույժը (հազ. դրամ) | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մասնաճյուղի անվանումը | ցանցի անվանում | | | | | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 1 | | | | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | | | | | | |

ԷՄԱ* Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններ

(էլեկտրոնային ստորագրություն) (անուն, ազգանուն)

**Հավելված № 7**
Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի --------------№-----Ա
որոշման

## Տեղեկատվություն բաժանորդների միջին քանակի վերաբերյալ

(ըստ մարզերի)

___________ 20-- թվական
(եռամսյակ)

| № | Մարզի անվանումը | Բաժանորդների միջին քանակը | | ընդամենը | նշումներ |
|---|---|---|---|---|---|
| | | բնակչություն | այլ սպառողներ | | |
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* |
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| 3 | | | | | |
| 4 | | | | | |
| 5 | | | | | |
| 6 | | | | | |
| 7 | | | | | |
| 8 | | | | | |
| 9 | | | | | |
| 10 | | | | | |
| 11 | | | | | |
| Ընդամենը | | | | | |

___________________________________________ ________________________
(էլեկտրոնային ստորագրություն) (անուն, ազգանուն) »

Հավելված № 8
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի 2022 թվականի -----------ի
№______Ա որոշման

# Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## Բաշխման ցանցի էլեկտրակայանքների հուսալիության փաստացի ցուցանիշների մասին

## 20 թվական

| № | Էլեկտրակայանքի անվանումը | Լարումը (կՎ) | Էլեկտրակա-յանքների քանակը (հատ) կամ երկարությունը (կմ) | Անջատումների ընդհանուր քանակը (հատ) | Հրաժարումների ընդհանուր քանակը (հատ) | Էլեկտրական ցանցի շղթայի աշխատունակ վիճակի վերականգնման տևողությունը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | առավելա-գույն (ժամ) | միջին (ժամ) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | Ուժային տրանսֆորմատոր | | | | | | |
| 2 | Ուժային տրանսֆորմատոր | | | | | | |
| 3 | Ուժային տրանսֆորմատոր | | | | | | |
| 4 | Ուժային տրանսֆորմատոր | | | | | | |
| 5 | Ուժային տրանսֆորմատոր | | | | | | |
| 6 | Յուղ. անջատիչ մեծածավալ | | | | | | |
| 7 | Յուղ. անջատիչ փոքրածքվալ | | | | | | |
| 8 | Էլեգազային անջատիչ | | | | | | |
| 9 | Բաժանիչ | | | | | | |
| 10 | Զատիչ | | | | | | |
| 11 | Յուղ. անջատիչ | | | | | | |
| 12 | Էլեգազային անջատիչ | | | | | | |
| 13 | Վակումային անջատիչ | | | | | | |
| 14 | Բաժանիչ | | | | | | |
| 15 | Զատիչ | | | | | | |
| 16 | Յուղ. անջատիչ | | | | | | |
| 17 | Վակումային անջատիչ | | | | | | |
| 18 | Բաժանիչ | | | | | | |
| 19 | Հզորության անջատիչ | | | | | | |
| 20 | Ավտոմատ անջատիչ մուտքի | | | | | | |
| 21 | Հատիչ մուտքի | | | | | | |
| 22 | Օդային գիծ | | | | | | |
| 23 | Օդային գիծ | | | | | | |
| 24 | Օդային գիծ | | | | | | |
| 25 | Մալուխային գիծ | | | | | | |
| 26 | Մալուխային գիծ | | | | | | |
| 27 | Օդային գիծ | | | | | | |
| 28 | Մալուխային գիծ | | | | | | |

Հավելված№9

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2022 թվականի ________ __-ի
№ _____ որոշման

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

**սպառողների հոսանքազրկումների քանակի և տևողության SAIDI, SAIFI և CAIDI ցուցանիշներ 20__թ.**

**(աճողական՝ ըստ եռամսյակների)**

| | Մարզ | Սպառողների քանակ | Սպառողների հոսանքազրկումների միջին տևողություն (րոպե/սպառող) | | | | | | | | Սպառողների հոսանքազրկումների միջին հաճախություն (հոսանքազրկում/սպառող) | | | | | | | | Սպառողների հոսանքազրկումների վերականգնման միջին տևողությունը (ընդհատում/ժամ) | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ընդհատման պատճառը* | | | | | | | | Ընդհատման պատճառը* | | | | | | | | Ընդհատման պատճառը* | | | | | | | |
| | | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 1-3 | 1-6 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 1-3 | 1-6 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 1-3 | 1-6 |
| 1 | Երևան | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | Արարատ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | Վայոց Ձոր | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | Արագածոտն | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 5 | Արմավիր | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 6 | Կոտայք | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 7 | Գեղարքունիք | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8 | Տավուշ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 9 | Շիրակ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 10 | Սյունիք | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11 | Լոռի | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՐԶԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

* 1) - բաշխման ցանցի էլեկտրակայանքի պլանային նորոգման պատճառով,
2) - բաշխման ցանցի էլեկտրակայանքի արտահերթ նորոգման պատճառով,
3) - բաշխման ցանցի էլեկտրակայանքի հրաժարման պատճառով,
4) - այլ ընկերության պատճառով՝ բացառությամբ սպառողների,
5) - սպառողների պատճառով,
6)- բաշխողի գործունեության վրա ազդեցություն ունեցած ֆորս-մաժորի պատճառով:

Հավելված № 10
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2022 թվականի ________ __-ի
№ _____ որոշման

**Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**սպառողների մոտ թույլատրելի սահմաններից լարման շեղման**
**դեպքերի քանակի և տևողության մասին**
**20__թ. (աճողական՝ ըստ եռամսյակների)**

| | Մարզ | Սպառողների քանակ | Սպառողների էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին տևողություն (ժամ/սպառող) | | | | | Սպառողների էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին հաճախությունը (լարման շեղում/սպառող) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Լարման շեղման պատճառը* | | | | | Լարման շեղման պատճառը* | | | | |
| | | | 1 | 2 | 3 | 4 | 1-4 | 1 | 2 | 3 | 4 | 1-4 |
| 1 | Երևան | | | | | | | | | | | |
| 2 | Արարատ | | | | | | | | | | | |
| 3 | Վայոց Ձոր | | | | | | | | | | | |
| 4 | Արագածոտն | | | | | | | | | | | |
| 5 | Արմավիր | | | | | | | | | | | |
| 6 | Կոտայք | | | | | | | | | | | |
| 7 | Գեղարքունիք | | | | | | | | | | | |
| 8 | Տավուշ | | | | | | | | | | | |
| 9 | Շիրակ | | | | | | | | | | | |
| 10 | Սյունիք | | | | | | | | | | | |
| 11 | Լոռի | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՐԶԵՐ | | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ | | | | | | | | | | | | |

* 1) - բաշխողի պատճառով,
2) - այլ ընկերությունների պատճառով՝ բացառությամբ սպառողների
3) - սպառողների պատճառով,
4) - բաշխողի գործունեության վրա ազդեցություն ունեցած ֆորս-մաժորի պառճառով: